

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված
 ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման
 աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքը (Լեռնագոգ բնակավայրը) ներառող
 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի
 փոփոխության վերաբերյալ
 (Բաղրամյան համայնքի (Լեռնագոգ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման
 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝



ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքը (Լեռնագոգ բնակավայրը) ներառող
 միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-1 համակցված տարածական պլանավորման
 փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի (Լեռնագոգ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-045-0109-0123 կադաստրային ծածկագրով 19.86694 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	04-045-0109-0123 կադաստրային ծածկագրով 19.86694 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել
 ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին
 համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն.
 քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական
 նորմերի պահանջները:

3. Բաղրամյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն
 արտացոլել Բաղրամյան համայնքի (Լեռնագոգ բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական
 քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան
 համայնքի (Լեռնագոգ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից
 բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	 Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող	 Լ.Սարգսյան